

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

10 օգոստոսի 2021 թ.

N 53 - Լ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 08.09.2020թ.  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ  
ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ, ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ  
ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՏՍՏՐԻ  
ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հանրային վերահսկողության խորհրդի 2020 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1-Լ որոշման 2-րդ հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը որոշում է՝

1. 2020 թվականի սեպտեմբերի 8-ի Պալատի խորհրդի N 1-Լ որոշման հավելված 3-ի 15-րդ կետից հետո ավելացնել.

«16) տեղեկություններ Պալատին անդամակցությունը չեղարկելու մասին՝ նշելով անդամակցության չեղարկման մասին որոշման ընդունման ամսաթիվը, համարը և որոշման ընդունման հիմքերը:»:

2. 2020 թվականի սեպտեմբերի 8-ի Պալատի խորհրդի N 1-Լ որոշման հավելված 4-ի 11-րդ կետից հետո ավելացնել.

«12) աուդիտորական կազմակերպության ՀԳԳՀ, եթե փորձագետ հաշվապահն աշխատում է աուդիտորական կազմակերպությունում:

13) տեղեկություններ Պալատին անդամակցությունը չեղարկելու մասին՝ նշելով անդամակցության չեղարկման մասին որոշման ընդունման ամսաթիվը, համարը և որոշման ընդունման հիմքերը:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ